

Ենթակառուցվածքներ և միջավայր

Արդյունավետ կրթական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ է համալսարանի ներսում ապահովել բոլոր պայմանները, որ ուսանողները, դասախոսներն ու հետազոտողները կարողանան արդյունավետ և մոտիվացված աշխատել և սովորել: Այս առումով չափազանց կարևոր է համալսարանում բարելավել ինչպես ֆիզիկական, այնպես էլ թվային ենթակառուցվածքները, համապատասխանեցնել ԵՊՀ-ն միջազգային լավագույն չափանիշներին և համալսարանի տարածքը դարձնել սովորելու, հետազոտելու, ստեղծագործելու և հայտնագործություններ կատարելու համար լավագույն միջավայր:

- Լաբորատորիաների և լսարանների վերանորոգում
- Էներգետիկ համակարգի արդիականացում և էներգաարդյունավետության բարձրացում
- Հակահրդեհային անվտանգության համակարգի արդիականացում
- Ուսանողական կենտրոնի կառուցում
- ՍԹԵՄ ավագ դպրոցի կահավորում և համալրում սարքավորումներով
- Մեդիա հարթակի բարեփոխում և արդիականացում
- Բիզնես ինկուբատոր-աքսելերատորի զարգացում
- Թվային հարթակների արդիականացում
- Գրադարանի ընթերցասրահների, գրապահոցի բարեկարգում, թվային և թղթային ֆոնդի համալրում

Անդամակցություն

Երևանի պետական համալսարանի բարեկամ դառնալու համար սահմանված է տարեկան 250 ԱՄՆ դոլար անդամավճար:

Բացի դրանից՝ կազմակերպության անդամները հնարավորություն ունեն ընդգրկվելու անդամակցության հետևյալ կարգերից մեկում ելնելով նրանց ներգրավվածության մակարդակից.

- աջակիցներ,
- պատվավոր շրջանավարտներ,
- հովանավորներ,
- խնամակալներ,
- խորհրդատուներ,
- ԵՊՀ նախագահներ,
- ԵՊՀ կնքահայրեր,
- ԵՊՀ հիմնասյուներ:

Անդամության կարգերը, ինչպես նաև անդամակցության հատուկ արտոնությունների տրամադրումը վերապահված է հիմնադրամի խորհրդին:

«ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամի խորհուրդը

FRIENDS of YSU

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



Մեր մասին

«Երևանի պետական համալսարանի բարեկամներ» հիմնադրամը ոչ առևտրային նախաձեռնություն է, որը հիմնադրվել է ԵՊՀ շրջանավարտների և բարեկամների կողմից՝ կենտրոնացնելու այն ամերիկահայերի ռեսուրսները, որոնք հավատում են, որ Երևանի պետական համալսարանը առանցքային դերակատարում ունի Հայաստանի զարգացման գործում:

Մենք համախմբում ենք տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ամերիկահայ մասնագետներին՝ աջակցելու Երևանի պետական համալսարանում իրականացվող կրթական, հետազոտական և ենթակառուցվածքային ծրագրերին: Մեր ջանքերն ուղղված են ուսումնական և հետազոտական գործընթացների ընդլայնմանը, ինչպես նաև ԵՊՀ-ի և ԱՄՆ-ում տեղակայված գործընկեր հաստատությունների միջև գործակցության ամրապնդմանը: Ավելին՝ մենք աջակցում ենք ԵՊՀ-ին՝ ԱՄՆ-ում և ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող հայկական Սփյուռքին կրթական և հետազոտական ծառայություններ մատուցելու գործում:

Տեսլական

«ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամը ԵՊՀ-ն դիտարկում է որպես տարածաշրջանային առաջատար համալսարան, որը Հայաստանի ինտելեկտուալ զարգացման շարժիչ ուժն է և կրթում է առաջադեմ, մոտիվացված, բանիմաց և արդյունավետ մասնագետների, որոնք էական դերակատարում ունեն Հայաստանի զարգացման գործում:

Առաքելություն

«ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամի առաքելությունն է նպաստել Երևանի պետական համալսարանի առաջընթացին՝ միավորելով այն ամերիկահայերի ֆինանսական և մասնագիտական ռեսուրսները, որոնք համակարծիք են այն տեսլականին, ըստ որի ԵՊՀ-ն առանցքային դեր ունի Հայաստանի մտավոր ներուժի զարգացման գործում:



«ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամի գործունեության հիմնական նպատակները և խնդիրները

- Ապահովել ԵՊՀ-ի և նրա գործունեության վերաբերյալ բարձր իրազեկվածություն ԱՄՆ-ում գործող կրթական, հետազոտական և սփյուռքյան կազմակերպությունների շրջանում:
- Նպաստել ամերիկյան կառույցների հետ գործընկերային կապերի և ցանցային համագործակցության հաստատմանն ու ընդլայնմանը:
- Իրականացնել ֆոնդահայթայթում և ստեղծել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ ԵՊՀ-ի կողմից առաջարկված կրթական, հետազոտական և ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար:

Գիտություն և հետազոտություն

Որպես հետազոտական համալսարան՝ ԵՊՀ-ն կարևորում է գիտահետազոտական որակյալ արդյունքի շարունակական բարելավումը: Այս գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ են թիրախային ծրագրեր: Չափազանց կարևոր է խրախուսել համալսարանի գիտաշխատողների ավելի ակտիվ ինտեգրումը միջազգային գիտական համայնքին, թիրախային հետազոտությունների կատարումը Հայաստանի, տարածաշրջանի և աշխարհի համար արդիական խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև երիտասարդների խրախուսումը՝ զբաղվելու գիտահետազոտական գործունեությամբ: Այս նպատակներին հասնելու համար հիմնադրամն աջակցություն է տրամադրելու ստորև ներկայացվող ծրագրային ուղղություններին:

- Արցախյան խնդրի քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական, մշակութային, պատմական, ազգագրական և հոգեբանական հայեցակետերին առնչվող թիրախային հետազոտություններ
- Գիտահետազոտական արդյունքի շուկայացմանն ուղղված ծրագրեր
- Համալսարան-ինդուստրիա կապի ամրապնդմանն ուղղված ծրագրեր
- Դրամաշնորհներ հիմնարար հետազոտությունների համար
- Տարածաշրջանային հետազոտություններին ուղղված հետազոտական դրամաշնորհներ
- Հայագիտության գլոբալ ցանց և աջակցություն հայագիտությանը ամբողջ աշխարհում գործող գործընկեր համալսարաններում
- Հայագիտական հետազոտություններին ուղղված դրամաշնորհային ծրագրեր (հայերենի նոր բառարան, հայկական նոր հանրագիտարան, հայոց պատմության քննադատական գնահատում)
- Հայագիտական պարբերական գիտաժողովներ միջազգային գործընկերների ներգրավմամբ

Աշխատանքային հիմնական ուղղություններն ու նախաձեռնությունները

Կրթություն

Կրթական ծրագրերի և գործընթացի կայուն ու համակարգային զարգացման ապահովումը համալսարանի կարևորագույն գործառույթներից մեկն է, ուստի կրթական ծրագրերի, դասավանդման մեթոդների կատարելագործման, դասախոսների վերապատրաստման, նոր դասավանդող անձնակազմի ներգրավման, ինչպես նաև ուսանողների և դասախոսների մոտիվացման և խրախուսման նպատակով ԵՊՀ-ն պետք է շարունակաբար իրականացնի նոր, երկրի և ժամանակակից աշխարհի պահանջներին արդյունավետ արձագանքող ծրագրեր և հավելյալ ռեսուրսներ տրամադրի հետևյալ ծրագրերի իրականացման համար՝



- կրթաթոշակներ և գերազանցության մրցանակներ ուսանողների համար,
- հրավիրյալ դասախոսների ներգրավման ծրագրեր,
- դասախոսների վերապատրաստման ծրագրեր,
- դասախոսական դրամաշնորհներ և գերազանցության մրցանակներ,
- մասնագիտական գրականության թարգմանություն օտար լեզուներից հայերեն,
- կրթաթոշակներ օտարերկրյա ուսանողների համար,
- հատուկ կրթական ծրագրեր սփյուռքահայ երիտասարդների համար,
- «Թվային ԵՊՀ» հարթակի զարգացում որակյալ առցանց կրթական ծրագրերի լայն ընտրությամբ: